

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

4 դեկտեմբերի 2014 թվականի

թիվ 13/18

քաղ. Սոչի

**Ռուսաստանի Դաշնության նախագահի 2014 թվականի օգոստոսի 6-ի թիվ
560 հրամանագրով հաստատված հատուկ տնտեսական միջոցների
պահպանման նկատմամբ հսկողության ուղղությամբ Ռուսաստանի ԴՄԾ-ի
աշխատանքների արդյունքների մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Ի գիտություն ընդունել այն ապրանքների ծավալների վերաբաշխման
բացահայտված միտումների վերաբերյալ Ռուսաստանի ԴՄԾ-ի
տեղեկատվությունը, որոնց նկատմամբ Մաքսային միության անդամ
պետություններում կիրառվում են Ռուսաստանի Դաշնության նախագահի 2014
թվականի օգոստոսի 6-ի թիվ 560 հրամանագրով սահմանված հատուկ
տնտեսական միջոցները (այսուհետ՝ առանձին կատեգորիայի ապրանքներ) եւ
Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների ներմուծումը
չթույլատրելու հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի
շրջանակներում Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից ձեռնարկվող միջոցների մասին:

2. Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՌԿԵԼՕՀ, Վ. Ի.Գոլոսկոկով)՝ ապահովել
ամսական առնվազն երկու անգամ հաճախականությամբ (հատուկ տնտեսական
միջոցների գործողության ժամկետի ընթացքում) Բելառուսի Հանրապետության

ՊՄԿ-ին եւ Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների ներմուծումը չթույլատրելու հետ կապված ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկատվության ուղարկումը:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ շարունակել Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության տարածքով Ռուսաստանի Դաշնություն առանձին կատեգորիայի ապրանքների տարանցումը չթույլատրելուն ուղղված աշխատանքները:

4. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում նվազեցնել մաքսային հսկողությունը առանձին կատեգորիայի այն ապրանքների նկատմամբ, որոնք տեղափոխվում են Ռուսաստանի Դաշնության տարածքով եւ նախատեսված են Ղազախստանի Հանրապետությունում ներքին սպառման համար այն դեպքում, երբ նման փոխադրումն իրականացվում է այն փոխադրողների կողմից, որոնց ցանկը սահմանվում է Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի կողմից, ղազախստանյան այն ստացողների հասցեին, որոնց ցանկը նույնպես սահմանվում է Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի կողմից:

5. Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ ապահովել՝

– ապրանքների բարեխիղճ փոխադրողների եւ ստացողների ցանկերի ուղարկումը Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ սույն Որոշման 4-րդ կետի իրականացման նպատակով, ինչպես նաեւ տվյալ ցանկերում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին.

– Ղազախստանի Հանրապետության ներքին սպառման առանձին կատեգորիայի ապրանքների նպատակային օգտագործման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաեւ անցկացվող հսկողական միջոցառումների

արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Ռուսաստանի ԴՄԾ-ին:

Նախագահ՝

Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝

Դ.Ե. Երզոժին

Բելառուսի Հանրապետության

ՊՄԿ-ի նախագահի տեղակալ,

Միավորված կոլեգիայի անդամ՝

Ս.Վ. Բորիսյուկ